«Կրթական ծրագրերը Ավ. Իսահակյանի տուն-թանգարանում»

Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի հիմնադրման 60-ամյակին ընդառաջ

Կյանքի ռիթմի, սերնդի հետաքրքրությունների փոփոխման արդյունքում փոխվել է նաև հասարակության պահանջը կրթության և մշակույթի նկատմամբ: Ինչն առավել բազմաբովանդակ է դարձնում կրթական ու մշակութային հաստատությունների գործունեությունը և մղում նորանոր պրպտումների:

Ժամանակի ընթացքում առավել մեծանում է հետաքրքրությունը թանգարանի նկատմամբ: Թանգարանն այժմ ընկալվում է որպես այլընտրանքային կրթական ակտիվ կենտրոն, որն իր լուրջ ներդրումն ունի սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման գործընթացում:

Վերջին տարիներին թանգարանային կրթությունը մեծ զարգացում է ապրել ինտերակտիվ մեթոդների կիրառման առումով. կիրառվում են թանգարանային կրթության համաշխարհային ձեռքբերումներն ու փորձը՝ ապահովելով կրթության շարունակականությունը ողջ կյանքի ընթացքում: Ներկա պահին թանգարաններն ընդլայնում են իրենց այցելուների շրջանակները հենց այդ նոր ծրագրերի շնորհիվ՝ վիրտուալ էքսկուրսիաներ, նորագույն տեխնոլոգիաների կիրառում, ինտերակտիվ դասընթացներ, կրթական ծրագրեր տարբեր տարիքային խմբերի համար՝ ձևավորելով համապատասխան վերաբերմունք մշակութային ժառանգության նկատմամբ:

Լրացուցիչ կրթության առանձնահատկություններից են շարունակականությունն ու ինտերակտիվ բնույթը: Վերջին տասնամյակում թանգարանների գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունների արդյունքում ձևավորվում են նոր ցուցադրություններ, ստեղծվում են նոր ծրագրեր, որոնց շնորհիվ թանգարանի ցուցանմուշները պասիվ վիճակից վերածվում են <<խոսող>> ցուցանմուշների: Առավել մեծ է այժմ համագործակցային աշխատանքի դերը՝ թանգարան-հանրակրթական հաստատություն, թանգարան-բարձրագույն ուսումնական հաստատություն, թանգարան-մշակութային այլ հաստատություն և այլն:

Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանը ևս, քայլելով ժամանակին համընթաց, մշտապես փորձում է նոր ուղիներ, ձևեր, մոտեցումներ գտնել, որոնք ուղղված կլինեն հենց մշակույթ-հասարակություն կապի ամրապնդմանը:

Վերջին տարիներին թանգարանում փոխվել, ավելացվել, նորացվել են բազմաթիվ ծրագրեր, որոնց շնորհիվ հնարավոր է դարձել ապահովել հասարակության տարբեր շերտերի ընդգրկումը թանգարանի այցելուների շարքում:

Թանգարանի գործունեության, իրականացվող բազմաթիվ ծրագրերի ու միջոցառումների մեջ իրենց ուրույն տեղն ունեն նաև կրթական ծրագրերը:

Բարձր գնահատելով կրթական հաստատություն-թանգարան փոխադարձ կապն ու համագործակցության անհրաժեշտությունը՝ Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանը ևս ամեն ջանք գործադրում է տեխնոլոգիաների, նորարարությունների ներկայիս ժամանակաշրջանում նոր սերնդին հետաքրքիր, բազմաբովանդակ նյութ մատուցելու և այն հիշվող ու ազդեցիկ դարձնելու համար: Դա է պատճառը, որ գործող կրթական ծրագրերը շարունակաբար նորացվում ու համալրվում են: Թանգարանի նպատակն է ոչ միայն ապահովել մշտական այցելությունների հաճախականությունը, այլև, հաղորդակից դառնալով և քայլելով կրթական բարեփոխումներին զուգընթաց, մշտապես լինել կրթական հաստատության և մանկավարժի կողքին, քանզի սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը ենթադրում է նաև ընտանիք և սոցիալական հաստատություններ ակտիվ համագործակցություն:

Թանգարանում իրականացվող կրթական ծրագրերը մշակելիս հաշվի են առնվում հանրակրթական հաստատության ուսումնական պլանում ընդգրկված ծրագիրն ու ծրագրային նյութերը, ինչպես նաև առկա դաստիարակչական հիմնախնդիրները:

Հաշվի առնելով բարեփոխումների արդյունքում հանրակրթական համակարգում ներդրված փոփոխությունները՝ կրթական ծրագրերը մշակվում են ուսուցման հենց այդ նորարարական սկզբունքների և մեթոդների համադրմամբ՝ կարևորելով իհարկե աշակերտակենտրոն մոտեցումը, ինչը ենթադրում է երեխայի ակտիվ ու անմիջական մասնակցությունն ամբողջ գործընթացին որպես գործընթացի սուբյեկտ:

Իրականացվող կրթական ծրագրերի առաջնային նպատակն է երեխաներին ուղղորդել դեպի մշակույթը, հայ ինքնությունը, սեր և հետաքրքրություն առաջացնել մեր հոգևոր ու նյութական ժառանգության նկատմամբ:

Վարպետի ստեղծագործությունները հիմք են հանդիսանում կրթադաստիարակչական հիմնախնդիրների վերհանման, ինչպես նաև դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման համար:

Կրթական ծրագրերի սկզբում երեխաների համար անցկացվում է ճանաչողական շրջայց թանգարանի հուշային հատվածում՝ հաղորդակիցը դարձնելով նրանց գրողի անձնական իրերին, որոնք իրենց մեջ պահում ու ամփոփում են Վարպետի մասին հիշողությունները:

Վերջին մեկ տարվա ընթացքում թանգարանում գործող կրթական ծրագրերին հանրակրթական հաստատությունների ակտիվ մասնակցությունը, հատկապես կրտսեր դպրոցականների ընդգրկումը թանգարանի մշտական այցելուների շարքում, ինչպես նաև ներառական կրթություն, դաստիարակություն իրականացնող հաստատությունների ակտիվությունը, ևս մեկ անգամ փաստում են, որ ներդրված ջանքերն արդյունավետ են և ևս մեկ քայլով ամրապնդում են հասարակության տարբեր շերտերի և թանգարանի միջև կապը:

Յուրաքանչյուր ծրագրի մշակման համար ընտրվում է մեր կողմից մշակված հետևյալ մեխանիզմը՝

- *Նյութի ընտրություն* (հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները, դպրոցի ուսումնական պլանում ընդգրկված ծրագրային նյութերը՝ ընտրվում է այնպիսի ստեղծագործություն, որում արծարծված թեման, գաղափարը ոչ միայն արդիական է, այլ նաև կարող է ամբողջացնել երեխաների ունեցած գիտելիքները):
- *Նյութի հիմնական բովանդակությունը, գաղափարը վեր հանող հարցերի մշակում* (խթանիչ այնպիսի հարցերի մշակում, որոնք հնարավորություն կտան ոչ միայն վեր հանելու նյութի էությունը, հիմնական գաղափարը, այլև բացահայտելու երեխաների ունեցած պատկերացումներն ու գիտելիքները արծարծվող հարցերի վերաբերյալ):

- *Համապատասխան դիդակտիկ նյութերի պատրաստում* (այնպիսի նյութերի պատրաստում, որոնք հնարավորություն կտան համադրելու տեսությունն ու պրակտիկան՝ ապահովելով զննականությունն ու մատչելիությունը):
- *Համապատասխան կերպարվեստի աշխատանքի պլանավորում* (հաղորդվող նյութի ամրապնդման համար ընտրվում է այնպիսի աշխատանք, որը ոչ միայն պետք է ամրապնդի ստացած տեղեկատվությունը, գիտելիքները, այլ նաև բացահայտի երեխաների կարողություններն ու զարգացնի որոշակի հմտություններ նկարչության, ծեփի, ապլիկացիոն աշխատանքների վերաբերյալ):
- *Ամփոփիչ հարցերի մշակում* (հարցեր, որոնք կբացահայտեն մատուցվող նյութի ընկալման, ինչպես նաև առաջադրված նպատակի իրագործման արդյունավետությունը):

Թանգարանում գործող կրթական ծրագրերը նախատեսված են հանրակրթական հաստատության կրտսեր, միջին և ավագ օղակների համար:

Ծրագրերի ընթացքում ոչ միայն բացահայտվում են մատուցվող նյութի վերաբերյալ երեխաների ունեցած պատկերացումներն ու գիտելիքները, և հաղորդվում է նորը, այլև Իսահակյանի ստեղագործությունների, խոհափիլիսոփայական մտքերի միջոցով վեր են հանվում այնպիսի համամարդկային գաղափարներ, ինչպիսիք են մարդասիրությունը, հայրենասիրությունը, գթասրտությունը, ընկերասիրությունը, ազնվությունը…

Կրտսեր դպրոցի համար մշակված ծրագրերն են՝ «*Արևի մոտ*», «*Իմ հեքիաթի գույները*», «*Եղնիկը*», «*Մանկության թևերով*», «*Աշխարհում ամենալավն իմ տունն է*»:

«**Մանկության թևերով**» - «Հուշ և հիշողություն» թեմայով զրույցից հետո երեխաները նշված ժամանակահատվածում փորձում են թանգարանում՝ցուցադրվող իրերի մեջ, գտնել այնպիսի առարկաներ, որոնք իրենց մեջ Իսահակյանի մանկության մասին հիշողություններ են պահել և փորձում են խոսել ու պատմել այդ իրերի փոխարեն: Այնուհետև Իսահակյանի մանկության հուշերից հատվածներ լսելուց հետո փորձում են մտովի

տեղափոխվել Իսահակյանի սիրելագույն Շիրակի Ղազարապատ գյուղը, նրա հետ շրջել Արագածի ծաղկաշատ փեշերին, վայելել Ախուրյանի վարար ջրերի հոգեհմա քչքչոցը, գետի ափին թեքված ջրաղացի տխուր երգն ու արոտից վերադարձող գառների մայունը…

Ինտերակտիվ սենյակում երեխաները փորձում են վերակերտել Ավետիք Իսահակյանի մանկության հուշերի Ղազարապատ գյուղը, գյուղի կենցաղին բնորոշ առարկաները, այն գողտրիկ միջավայրը, ուր անցել է Իսահակյանի անհոգ մանկությունն ու պատանեկությունը: Խմբի անդամներն իրենք են որոշում, թե յուրաքանչյուրն ինչ է պատրաստելու՝ առաջնորդվելով փոխօգնության և միասնականության սկզբունքներով:

«Իմ հեքիաթի գույները» ծրագրի ընթացքում երեխաները հեքիաթի արտասովոր միջավայրում ծանոթանում են ժողովրդական իմաստության այս տեսակին: Հեքիաթի այլաբանական բնույթի, նրա տեսակների, բովանդակության, կառուցվածքի, ինչպես նաև հայտնի հեքիաթագիրների մասին զրույցից, դիդակտիկ խաղից հետո երեխաները «տեղափոխվում» են իրենց հեքիաթի զարմանահրաշ աշխարհը և փորձում այն վերածել գույնի: Այնուհետև մասնակիցները տեղափոխվում են աշխատասենյակ, որտեղ գույների ներկապնակի միջոցով փորձում են մատներով թղթին վերարտադրել իրենց հոգու հեքիաթը:

Միջին դպրոցի համար մշակված ծրագրերն են՝ «*Ի՞նչ է ասում առակը*», «*Մնանը Հայաստանի աչքն է*», «*Ես բնության մի մասնիկն եմ*»,:

«**Ի՞նչ է ասում առակը**» - Թանգարանում շրջայցից հետո երեխաները նստում են մեծ ցուցասրահի գորգին: Խթանիչ հարցերի միջոցով բացահայտվում է ժողովրդական իմաստությունների վերաբերյալ ուսումնական ծրագրի շրջանակներում երեխաների ձեռք բերած գիտելիքները, ինչպես նաև այդ մասին առօրյա կյանքում մեծերից լսած տեղեկությունները: Նրանք մեկը մյուսի հետևից թվարկում են ժողովրդական իմաստությունների ծանոթ տեսակները, ներկայացնում մի քանիսը: Այնուհետև քարտերի միջոցով կատարվում է վիճակահանություն, որի արդյունքում յուրաքանչյուր երեխա պետք է փորձի գուշակել իրեն բաժին ընկած ժողովրդական իմաստության տեսակը: Առակի այլաբանական բնույթի, նրա տեսակների, բովանդակության, կառուցվածքի,

ինչպես նաև հայտնի առակագիրների մասին զրույցից հետո երեխաները դիտում են Ավետիք Իսահակյանի «Արջն ու օձը» առակի հիման վրա նկարահանված մուլտֆիլմը: Ստեղծագործությունը քննարկելուց հետո երեխաներն առակի սյուժեն փորձում են բաժանել մի քանի դրվագների, որի շնորհիվ հնարավոր է դառնում նույնանուն պատկերազարդ գրքի ստեղծումը: Երեխաները տեղափոխվում են աշխատասենյակ, որտեղ համապատասխան նյութերի օգնությամբ յուրաքանչյուրը պատրաստում է «Արջն ու օձը» վերնագրով իր առակի գիրքը՝ ըստ ցանկության կատարելով բովանդակային փոփոխություններ կամ վերածելով ժողովրդական մեկ այլ իմաստության:

Ավագ դպրոցի համար մշակված ծրագրերն են՝ ***«Վարպետը, ես և մայրաքաղաք Անին», «Թանգարանը ՔՈ ձեռքերում», «Նամակ զինվորին Վարպետի տնից»:***

«Վարպետը, ես և մայրաքաղաք Անին» ծրագրի ընթացքում երեխաները Անիի մասին Վարպետի թողած հուշերի հետքերով երևակայական շրջայց են կատարում հայոց հինավուրց մայրաքաղաք Անիում, այնուհետև հատուկ պատրաստված դետալների օգնությամբ վերակերտում են Անիի Մայր տաճարը, ամրակուռ պարիսպներն ու հնամենի քաղաքի մի քանի կոթողներ: Այն, ինչ երեխաները «տեսնում են», « լսում» ու « զգում» մտովի շրջայցի ժամանակ, նրանք փորձում են այդ մասին մի փոքրիկ գրառում կատարել «Անիի տպավորությունների մատյանում»՝ Վարպետի անունից այսուհետ համարվելով նաև Անիի քաղաքացի:

Յուրաքանչյուր ամսվա ավարտին թանգարանում իրականացվող աշխատանքների ամփոփումը, վերլուծությունն ու քննարկումները, այցելուների արձագանքները փաստում են, որ ծրագրերի մշակման տվյալ մեխանիզմը շատ արդյունավետ է:

Քաջ գիտակցելով հանրակրթական հաստատությունների ծանրաբեռնվածությունը, աշակերտակենտրոն ուսուցման իրականացման դժվարությունները՝ թանգարանն այս կերպ փորձում է իր մասնակցությունն ու աջակցությունը բերել կրթադաստիրարակչական գործընթացին:

Շուշան Հովակիմյան

Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի

ավագ գիտաշխատող